894.362
Uh-92

894.362
Կհ-92
(68)

ՀՐԱՏ. Ց. Բ—ԵՄԵՆԻ

ԲԱՐԵՓՈԽԱԾ

ԱՐՔԻՆ ՄԱԼ-ԱԼԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Գ. Տպագրումիրն

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԻՊՈԽՈՆ» Մուզէյսկի պող. № 8
1917

5 FEB 2013

Կ7044.64

ԱՐՇԻՆ ՄԱԼ-ԱԼԱՆ

Ա՜խ, մթթէ կը ճարուի աշխարհում
Ինձ նման դարդոտ մի մարդ.
Հալ չը մնաց ինձանում,
Մնալով այսպէս մենակ։

Ա՜խ, մթթէ շատ պէտք է տևի,
Այս իմ չարչարանքը.
Ծնուեցի ես երևի որ,
Մենակ անցնի իմ կեանքը։

---

* * *

Դարդերիս մի ճար գտիր, խալա, խալա.
Տանջւում եմ, ինձ ազատիր, խալա, խալա,
Մթթէ ես այսպէս միշտ պիտ տանջւեմ,
Ա՜խ, այս տանջանքից ազատիր։

***

Սև-սև աչերով,
Գեղ ու վառվռուն.
Կարմիր այտերով,
Վարդին նման դուն.
Ինքդ մանուշակ.
Զը բացած կոկոն.
Հոտդ անուշիկ,
Բուրմունքով լեցուն.

Տեսնողի աչքին,
Կը տամ երանի.
Ով որ քեզ ճամբին
Միշտ կը պատահի,
Քեզ տեսնելու պէս,
Սիրտս է այրւում,
Ուզում եմ խօսել,
Լեզուս է լռում.

Անխիղճ անասուած
Ի՞նչ մեղք արի ես,
Որ ինձ չարաչար,
Մաշում, հալում ես.
Թողիր ինձ մենակ,
Հեռու գնացիր.
Գիշեր ու ցերեկ,
Վշտի մատնեցիր.

Ահա գնում եմ,
Անյայտ կորչելու.
Ես հեռանում եմ,
Քեզ չը տեսնելու.
Մնաք բարեաւ դուք,
Իմ քաղցը յոյսեր,
Որ չքացաք դուք,
Իմ երազ օրեր։

Յ. Բ—ԵԱՆ

***

Զէդբրաս ծածկեմ գնամ,
Խալան քեզ մատաղ Ասկեար.
Քեզ համար աղջիկ գրանեմ,
Խալան քեզ մատաղ Ասկեար։

—Քո գրատածդ ի՞նչ կանեմ,
Այդ լաւ չի լինի խալա,
Աղջիկը ես պիտ առնեմ,
Արդեօք ինձի դուր կըգա՞յ։

Մեր օրէնքում այդ չը կայ,
Որ աղջկան տեսցնեն,
Եկ իմ խորհրդով գնայ,
Եւ այնպէս դու գործ արա։

—Քեզ լաւ յայտնի է խալա,
Որ չը տեսած առնիլ չեմ,
Թէկուզ չքնաղ լինի նա,
Ես կրկնում եմ, առնիլ չեմ։

—Դու շատ ուղիղ ասացիր,
Եւ այդպէս արա, աղա,
Իսկ դու քեզ հանգիստ պահիր,
Զուր մի չարչարուիր խալա։

---

* * *

Հաւատացիր ինձ Ասկեար ջան,
Անկեղծ եմ ես քեզ բարեկամ,
Խորհուրդներիս դուն հետևիր,
Եւ քեզ համար աղջիկ գտիր։

—Արշին մալչի ես կը լինեմ,
Եւ իմ աչքով աղջիկ կընտրեմ,
Իսկ քո խորհուրդների համար,
Մի լաւ նէէր քեզի կառնեմ։

—Դու տեսար որ ես խելօք եմ,
Եւ ինքս էլ շատ ազնիւ եմ,
Ասած նէէրդ որ առնես,
Ինչ որ խնդրես կը կատարեմ։

«Արշին մալ-ալան» Յ. Բաղդասարեան (Ասկեար)

«Արշին մալ-ալան»

Տիկ. Սոֆիկ (Խալա) Ս. Սուրաբեան (Սուլէյման)

—Վալի ինչու ես մտածում,
Եւ դուր ինչի՞ ես տանջւում,
Քեզ էլ մի աղջիկ կը գտնենք,
Իզուր ինչու ես ախ քաշում։

—Ա՜խ աղա ջան բարի եղէք,
Եւ ասածներդ կատարէք,
Գիշեր-ցերեկ ես տանջւում եմ,
Խեղճ Վալին եմ ինձ ազատէք։

---

* * *

Այդ ի՞նչ է քո դարդը,
Այս ի՞նչ տխրութիւն է սա.
Ի՞նչ է քո տանջանքը,
Ասա տեսնեմ, դու ասա։

Մի ամաչիր, պատմիր,
Ասկեար, քո դարդը ինձի.
Ի՞նչ ես դու մտածում,
Նման այդպէս գերիի։

Այս աշխարում մի՞թէ,
Քո դարդերին ճար չկայ.
Վերջ տուր մտածմունքիդ,
Պատմիր տեսնեմ թէ ի՞նչ կայ։

Միթէ դու չես լսել,
Որ այսպիսի առած կայ.
Աշխարիս երեսին,
Անկարելի բան չկայ։

Ս. Մ.

---

* * *

Սեւ-սև աչեր, գեղեցիկ,
Ինձ մի անի խելագար,
Տանջւում եմ գիշեր-ցերեկ,
Քո սիրովդ անդադար։

Ինչու համար մտածել,
Եւ իզուր տեղը տանջւել,
Արի մենք ամուսնանանք։
Որ բոլորս ուրախանանք։

—Դու շատ ուղիղ ասացիր,
Որ լաւ է ամուսնանանք,
Եւ յետոյ, մենք բոլորս,
Վարենք ուրախ հանգիստ կեանք։

«Աբշին մալ-ալան» Ց. Բաղդասարեան, Ասկեռ (Աբշին մալչի)

* * *

Սովորելով փորձեցի,
Ամենքից ես ծաղրեցի.
Ցաւ ու տանջանք շատ տարայ,
Բայց վերջապէս քեզ գտայ՝

Այնպէս սիրեցի, սրտով սիրեցի,
Որ չեմ կարող ասել քեզ
Եւ չեմ ապրի առանց քեզ։

Ոչոքին չէի տեսնում,
Դարպերս չէի պատմում.
Ի՞նչ է սէր չը գիտէի
Քեզ տեսնելով սիրեցի՝

Այնպէս սիրեցի, սրտով սիրեցի,
Որ չեմ կարող ասել քեզ,
Եւ չեմ ապրի առանց քեզ։

Ա՜հ, մեր բաղդը մեզ օգնեց
Ես ինձ թշուառ կարծեցի
Բայց ինձ կեանքը ողջունեց
Քեզ տեսնելով սիրեցի՝

Այնպէս սիրեցի, սրտով սիրեցի,
Որ չեմ կարող ասել քեզ
Եւ չեմ ապրի առանց քեզ։

Ց. Բ—ԵԱՆ

* * *

— Աստուած օգնական լինի,
Իմ սիրելի ընկեր Ասկեար,
Քեզի լաւ խորհուրդ տուի,
Իմ սիրելի ընկեր Ասկեար.
Մի լաւ հարսնիքդ անենք,
Իմ սիրելի ընկեր Ասկեար.
Ուրախ-ուրախ քէֆ անենք։
Իմ սիրելի ընկեր Ասկեար։

— Ես ըլլեմ իմ Աստուածը,
Ես քեզ մատաղ ադա Ասկեար
Էս աղէն շատ լաւ է ասում,
Ես քեզ մատաղ, ադա Ասկեար։
Շուտ արա ամուսնացիր,
Ես քեզ մատաղ, ադա ասկեար,
Իմ ճանապարհս էլ բացուի
Ես քեզ մատաղ, ադա Ասկեար։

—Ամենից լաւը նա է,
Որ դու մեզի լսես Ասկեար,
Եւ այդ շորերդ փոխես,
Արշին-մալչի դառնաս, Ասկեար.
Փողոցները ման գալով,
Ձիթեր վաճառելով, Ասկեար,
Քեզ համար մի լաւ գեղեցիկ
Հարսանացու գտիր, Ասկեար։

Ս. Մ.

* * *

Կարծես զտայ ես իմ եարը,
Իմ դարդերիս դեղն ու ճարը,
Աստուած դուն օգնական եղիր,
Միայն սա է ինձ յարմարը։

Ս. Մ.

Որդից պատահեց, Աստուած իմ,
Արշին մալ-ալան,
Սիրտս կրակով լցրեց իմ,
Այրւում եմ։

Ինքը լաւ, խօսքերը քաղցր,
Արշին մալ-ալան,
Սիրեցի ամենից բարձր,
Մալ-ալան։

Ի՞նչ վատ ես տրամադրւած,
Գիւլչօհրա, մեզ ասա,
Ինչպէս մի խելագարւած,
Գիւլչօհրա, մեզ ասա,
Սիրտդ ինչո՞ւ է տխրած,
Գիւլչօհրա, շուտ ասա,
Մեզ ասա, Գիւլչօհրա.
Օրիորդին այդ չի սազի,
Տխրելն ու մտածել,
Այդ ի՞նչ է քեզ պատահել,
Գիւլչօհրա, շուտ ասա,
Մեզ ասա, Գիւլչօհրա։

Ս. Մ.

* * *

Մէկ ձի առայ աշխարհ ընկայ,
Ե՛կ առնեմ, դիլբիլմազ,
Վերջը եկայ քեզի գտայ։
Մարալս, դիլբիլմազ։
Մօտեցիր խնդրեմ, աչերդ տեսնեմ
Ե՛կ առնեմ, դիլբիլմազ։
Տուն կը շինեմ քեզի համար,
Ե՛կ առնեմ, դիլբիլմազ։
Մէջը զմրուխտ, ոսկի, մարմար,
Մարալս, դիլբիլմազ։
Մօտեցիր խնդրեմ, աչերդ տեսնեմ.
Ե՛կ առնեմ, դիլբիլմազ։
Ե՛ս այրի, դու այրի դու եկ,
Ինձ արի, դիլբիլմազ։
Ինչ ասեմ, դու ինձ յօժարիր,
Մարալս, դիլբիլմազ։

Ս. Մ.

* * *

Բէգի աղջիկը երևի սա է,
Մեր Ասկեարը շատ է հաւան կացել
Զեզ եմ ասում, շատ է հաւան կացել։
Ո՞վ կիմանար, որ Սուլթան-բէգը,
Այսպէս նախշուն, աղջիկ է ունեցել,
Զեզ եմ ասում, աղջիկ է ունեցել։
Ափսոս, ա՜խ ափսոս, ես չէի իմացել,
Որ այսպիսի գեղեցիկն է եղել,
Զեզ եմ ասում, գեղեցիկ է եղել։

«Արշին մալ-ալան» Ս. Սուրալեան (Սուլէյման)

«Արշին մալ-ալան» Յ. Բաղդասարեան, Ասկեար (Արշին մալչի)

***

Երջապէս գտայ, ես իմ ուզածը, ա՛յ աւաղ·
Ամբողջ քաղաքը, շրջելուց յետոյ
Մատ էլ ինձ յարմար է, իմ սիրածը, ա՛յ աւաղ,
Ու ինքն էլ ինձ սիրեց շատ սրտով։

Ե՛կ, եկ, սիրունիկս,
Ե՛կ, եկ, գեղեցիկս,
Քեզ տեսնելու համար,
Մալչի եմ դառել։

Դրանից լաւը, ես չէի գտնի, ա՛յ աւաղ,
Թէ ման գայի, ես հարիւր տարի,
Դեղի նման էլ իրար յարմար գոյգ, ա՛յ, աւաղ,
Արժաւոր թէ մէկ ուրիշ գտնուի։

Ե՛կ, եկ, սիրունիկս,
Ե՛կ, եկ, գեղեցիկս,
Քեզ տեսնելու համար,
Մալչի եմ դառել

Ս. Մ.

Բաւական է, մի լաց լինիր,
Ի՞նչ պատճառով, ինձ համար.
Մի՞թէ հօրից լաւ կը լինի,
Արշին-մալչին քեզ համար։

—Զեռքիս իրաւունքներ չունեմ,
Ո՞ւմից խնդրեմ օգնութիւն,
Հայրս դէպի ինձ խիղճ չունի,
Այս ինչ անասնաւորութիւն։

* * *

Եարաբ, ինչ մեղք էի գործել,
Որ ընկայ այս տանջանքի մէջ,
Աղաչում եմ քեզ, Աստուած իմ,
Շուտ ազատիր կամ տուր ինձ վերջ

Մինթէ ես նրան սիրելով,
Գործեցի այնպիսի մի մեղք,
Որ ինձ իմ եարից բաժանեն,
Եւ ինձ, գիշեր ցերեկ տանջեն։

Ս. Մ.

---

* * *

Ա՜խ երանի այն օրին,
Երբ կրտեսնեմ իմ եարին,
Կեանքս նրան զոհ կանեմ,
Մատաղ կանեմ իմ եարին,
Անաստուած, անաստուած, ով անխիղճ եա
Դու շուտով արի, խղճայ քո եարին,
Հալ ու մաշ եղայ, քեզ համար։

---

* * *

Մենք հասանք մեր նպատակին,
Դուք էլ հասնէք, ձեր մուրազին,
Աստուած կեանք տայ մեր Ասկեարին,
Պատճառ եղաւ, մեզ բոլորին։
Շնորհակալ եմ ես ձեզանից,
Սուլէյմանից որ, խրատ տուաւ ինձ.
Բէգին որ նաղչիկը տուաւ ինձ,
Աստուած երանք տայ մեզ բոլորիս։

Ս. Մ.

* * *

Հօրեղբայրս մեզ կը տանջի,
Կը չարչարի, մեզ կըսպանի,
Ով դու գթառատ Աստուած,
Խնայիր մեզ։
Գիւլչահրա, Գիւլչահրա, եկ այստեղ։
Խօսք ունեմ քեզ ասելու։

—Ի՞նչ կայ չը լինի,
Ցաւերս էք նորոգելու։

Գիւլչօհրա քեզի ամօթ է,
Իզուր ա՞խ ու վա՞խ մի անի,
Ի սէր Աստծոյ հանգիստ եղիր,
Թէ չէ հայրդ կը լսի։

—Ես չեմ մոռնայ այն տղային,
Այն սիրուն երիտասարդին,
Ղուրբան եմ ես նրա ջանին,
Նա է ինձ համար սիրելին,
Իզուր տեղը դուք ինձ միք չարչարի։

Գիւլչօհրա քեզի ամօթ է,
Ի զուր ա՞խ ու վա՞խ մի անի,
Ի սէր Աստծոյ հանգիստ եղիր,
Թէ չէ հայրդ կը լսի.
Ե՛կ հոգեակս դու մեզ լսիր,
Եւ այդ տղային մոռացիր,
Չէ որ նա քեզի յարմար չի,
Մեղք ես ի զուր մի չարչարուիր,
Մեղք ես ի զուր հալ ու մաշ մի լինիր։

***

Ինձ գցեց այս դարդերի մէջ,
Արշին մալ ալան.
Հալ չը մնաց իմ ջանիս մէջ,
Այրու�եմ։
Զոր ու գիշեր մտածում եմ,
Արշին մալ ալան։
Կարծես թէ երազումն եմ,
Տանջուում եմ։
Քեզ տեսնելուն պէս սիրեցի,
Արշին մալ ալան.
Օրէցօր խելագարուեցի,
Մաշուում եմ։

Ս. Մ.

***

Ա՜խ եարաբ, վերջ կը լինի,
Մեր այս ցաւ ու հոգսերին,
Աստուած դու խղճայ մեզի,
Եւ վերջ տուր մեր վշտերին։

Ինչու համար պէտք է մենք,
Խաւարում այսպէս տանջուենք,
Աստուած դու խղճայ մեզի,
Եւ վերջ տուր մեր վշտերին։

«Արշին մալ-ալան» Յ. Բաղդասարեան, Ակնարկ «Արշին մալէի»

***

իմ սիրած, քեզ եմ սպասում՝
ջեր-ցերեկ մտածում եմ,
ի արտասուքներ թափում,
ուում եմ, բայց քեզ տեսնում չեմ։
Ի՞նչ կը լիներ յանկարծ գայիր,
Էրւած սրտիս ճար բերէիր.
Ձեռքիցս բռնած ինձ տանէիր.
Սիրուն Թէլլի ինձ ասէիր։
Էլ կրծքիդ փաթաթուէի,
ծաղէի, արտասուէի,
Թէլլին եմ, քեզ ասէի,
արմար կրծքիդ ես փարուէի։

***

Այն ով էր, եարաբ,
Սիրտս ինչու այսպէս տխրեց,
Աղաչում եմ քեզ, Տէր իմ
Ա՜խ, ախ, այրւում եմ։
Որքան գեղեցիկ,
Էր այս երիտասարդը,
Աղաչում եմ քեզ, Տէր իմ
Ա՜խ, ախ, այրւում եմ։

Ս. Մ.

:—ԵԱՆ

* * *

Նստած ծառի տակ,
Ե՛ս մեն ու մենակ։
Սիրտս խոցոտված,
Վշտերով պատած։

Տխուր ու տրտում
Ես վեր էի նայում,
Եթերում նայում,
Ու դարդս ողբում։

Եւ չը կար մէկը։
Վշտերս պատմէի.
Իմ խոցված սիրտը,
Նրա առաջ բանայի։

Մէկին էի սիրում,
Թողեց հեռացաւ.
Նա իմ սրտում,
Վառ կրակ լցրաւ։

Ա՛խ, ինչ դժբախտ եմ,
Ե՛ս այս աշխարհում,
Որ տանջված սրտիս,
Մ՛օտ ընկեր չունեմ։

Որ բանամ սիրտս,
Դարդերս պատմեմ.
Անթիւ վշտերս,
Ցաւերս մեղմեմ։

Ց. Բ—ԵԱՆ

Ասիր, խօսիր, ուրախ եղիր,
Քեզ չի սազի տխրութիւն,
Ինչպէս մենք ենք այնպէս եղիր,
Որ ձեռք բերես, լաւ անուն։

Ս. Մ.

---

*
* *

—Հըլէ ինձ համար մարալ ես,
Ե՛ս քո աչերիդ մատաղ.
Ինչ կըլի ինձ եմ ըլես
Ես քո ծամերիդ մատաղ։

—Դու ինձ համար մարալ չես,
Ինչ ես ուզում ինձանից.
Լաւն այն է, որ հեռանաս,
Ուր որ է՝ էլ գայ աղէս։

Ս. Մ.

---

*
* *

Այս ինչ ուրախալի եղաւ,
Որ մենք մեր ուզածին առանք,
Աստուած կեանք տայ մեր Սակեարին,
Որ բոլորս ուրախացանք։

«Վրշին մալ ալան [illegible] արեանք (Վալի)

Սուլթար-բեգն էլ առողջացաւ,
Որ իր ընտրածին նա առաւ,
Էլ հիմա մէջքը չի ցաւի,
Խալային նա արժանացաւ։

Բա չէք ասի ես էլ գաայ.
Եւ իմ ընտրածին ես առայ,
Իմ թէյլօխս մատաղ լինեմ,
Ես էլ նրան արժանացայ։

Խանումը ապին—Ասիան Սուլէյմանին
Խալան Սուլթանին, Թէյլին նոքաբին
Ամենքս հասանք մեր մուրազին.
Աստուած թող տեսնք ապայ մնացողներին

---

*
* *

Ինքս հարուստ վաճառական լինելով
Ես դիտմամբ ըզգիկ չթէ վաճառ դարձա
Ու քանի օր փոզոցները ման գալով,
Վերջի-վերջոյ ես իմ ուզածին գտայ

Է՛կ, իմ ազատնեակս,
Է՛կ, դու իմ հոգեակս, եկ,
Սպասում եմ, շուտ արա
Այրում եմ, շուտ եկ, եկ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0385964

73.677